

**ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՔԱՐԵՂԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻ ՎԻՃԱԿԸ**

ԲԵՆԻԿ ԵՐԻՑՅԱՆ

Մարզի տարածքում առաջին քարե գործիքների հավաքածուն հայտնաբերել է Ժակ Սորգանը իր հնագիտական աշխատանքների ընթացքում (Մուշտի երի, Ախթալա)¹: Հյուսիսային Հայաստանում առաջին պալեոլիթյան գտածոն հայտնաբերել է 1950 թ. երկրաբան Ա. Ասլանյանը Քյաքլիկ սարի մոտի բարձունքից², Նոյեմբերյանի շրջանում (Տավուշի մարզ) գտնվել է քերիչ, պատրաստված կանաչավուն հասպիսից³: 1967 թ. մենք տեղանքն ուսումնասիրել և հայտնաբերել ենք երկու բացօթյա կայան (Գելիկ, Հացուտ), որոնք տվել են մուստերյան և վերին պալեոլիթյան ինդուստրիաներ, պատրաստված տեղական կայծքարից⁴ (նկ. 1, 2):

1968 թ. երկրաբան Հ. Սարգսյանը Ստեփանավանի շրջանի Պրիվոլնոյե գյուղի տարածքից (Ուրուտ) հատնաբերել է մարզում առաջին անգամ հանդիպող աշելյան օվալաձև ձեռքի հատիչ՝ պատրաստված ծխագույն կիսաթափանցիկ օբսիդիանից: Վերջինիս զծանկարը զետեղվել է Վ. Լյուբինի կողմից հրատարակված Ջրաբերի նյութերի հետ⁵:

1974 թ. հետազոտել են Ստեփանավանի շրջանի Չորագետի քարայրները և Գյուլագարակ ու Վարդաբլուր գյուղերի տարածքները: Հայտնաբերել ենք քարե գործիքների հավաքածուներ՝ բազալտից, կայծքարից, դաջիտից, սակայն դրանց սահմանափակ քանակը հնարավորություն չի տալիս որոշակի պատկերացում կազմել ոչ մշակութային պատկանելության և ոչ էլ պատրաստման ժամանակի մասին:

1977 թ. երկրաբան Կ. Կարապետյանը Ադստի վերին հոսանքում՝ Վանաձորի շրջանի Ֆիոլետովո գյուղի մոտ գետի հունից 15 մ բարձր դարավանդի մակերեսից հայտնաբերել է թվով 14 օբսիդիանի իրեր (մեծ մասամբ շեղբեր ու գործիքներ): Կարապետյանի հետ համատեղ (Ֆիոլետովո-1) մեր դիտարկումները հանգեցրին նոր կայանի հայտնաբերմանը (Ֆիոլետովո-2), որը գտնվում է առաջինից 150 մ գետի հոսանքով ցած, նույն դարավանդին՝ ճանապարհի եզրին:

Վերջինիս նյութն ավելի առատ է, գտածոների մեծ մասը գորշագույն ավազակավի մեջ են հանդիպում, հայտնաբերվել է 68 իր օբսիդիանից, կան ոսկորների մանր կտորներ, խեցեղենը բացակայում է: Հավանական է՝ երկու դեպքում էլ մենք գործ ունենք էնեոլիթյան - վաղբրոնզեդարյան խաթարված կայանների մնացորդների հետ:

¹ J. de Morgan. Mission Scientifique au Caucase. Archaeologique, t. I. Paris, 1989, pp. 29-32.

² А. Т. А с л а н я н. Региональная геология Армении. Ереван, 1958, с. 186.

³ С. А. С а р д а р я н. Палеолит в Армении. Ереван, 1954, с. 105.

⁴ Բ. Գ. Երիցյան. Քարեդարյան կայաններ Նոյեմբերյանի շրջանում. - ՀՄՄՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1970, № 5, էջ 84-90:

⁵ В. П. Л ю б и н. Палеолит Кавказа и Средней Азии. М., 1989, с. 90, рис. 28-5.

Մարզի տարածքում ամենավաղ մակրոֆաունայի գտածոները հայտնի են դեռևս XIX դարի վերջից: Ն. Գարագաշը Փամբակ գետի վերին հոսանքում Նալբանդ-Սպիտակ հատվածի դարավանդի կավավազային ու գետաքարային ալյուվիալ նստվածքներից հայտնաբերել է *Elephus Primigenius Blum*-ի (հնագույն փիղ) և *Equus Coballus L.*-ի (հին ձի) մնացորդներ: Երկրաբան Կ. Մկրտչյանը Արջուտ գյուղի տարածքից հայտնաբերել է *Rinoceros Anticuitatis Blum*-ի (ռնգեղջյուր անտիկ) մի ամբողջական գանգ⁶:

Հետագայում հնակենդանաբան Կ. Դալը Վանաձոր քաղաքի արվարձանի դարավանդի ավազակավից հայտնաբերել է *Bos Primigenius Boj*-ի (հնագույն ցուլ) մնացորդներ: Վանաձորի շրջանից է գտնվել նաև Երևանի երկրաբանական թանգարանում պահվող *Equus hidruntinus Reg*-ի (վայրի էշ) ծնոտը (հավանական է տրավիտինների միջից): Երկրաբան Տ. Հայրապետյանը Վանաձորի շրջանի Լերմոնտովո-Համգաչիմանի տորֆային նստվածքներն ուսումնասիրելիս հայտնաբերել է *Cervus elaphus*-ի (ազնիվ եղջերու) գանգի մնացորդներ: Ըստ Համգաչիման գյուղի մոտ՝ Ֆրոլովա բալկա վայրի տորֆային նստվածքների վերին հատվածի ռադիոածխածնային թվագրության (43 հազ.) ու հնաբուսաբանական փոշեհատիկի անալիզի արդյունքների՝ նա նշված նստվածքների երկրաբանական տարիքը որոշել է վերին պլեստոցենի մաքսիմում սառցապատման դեգրադացման ժամանակաշրջանով⁷:

Լոռու մարզի քարեդարյան հուշարձանների բացահայտման նորագույն ժամանակաշրջանը սկսվել է քարե գործիքների հումքի աղբյուրների ուսումնասիրությամբ: 1994-1995 թթ. Բ. Գասպարյանն այդ նպատակով հետախուզական աշխատանքներ է կատարել Տաշիրի սարահարթում: Արդյունքում անդեզիտ-բազալտերի, կալծարի, կվարցի ու դաջիտե գետաքարերի կուտակումներ ու երևակումներ են հայտնաբերվել Մեծավան, Պաղաղբյուր, Նորաշեն, Մարատովկա և Պրիվոլնոյե գյուղերի շրջակայքում: Նշված վայրերում հայտնաբերվել են տասնյակ բացօթյա կայաններ, տարբեր քարատեսակներից, այդ թվում նաև օբսիդիանից, պատրաստված իրերով, որի հումքի աղբյուրի տեղադրությունը մարզում դեռ պարզված չէ: Հայտնաբերվել են նաև երկու քարայրային տիպի փոքր ժայռածածկեր (Կաթնաղբյուր, Կրուզլայա Շիշկա), որոնց տեղահանված ու խառնված նստվածքների մակերեսից հայտնաբերվել է նույն բնույթի նյութեր, ինչ գտնվել են բացօթյա կայաններում⁸:

Ընդհանուր առմամբ, հնագիտական նյութերի սակավությամբ ու տարածման սահմանափակությամբ հանդերձ, դրանք ընդգրկում են չափազանց լայն ժամանակագրական դիապազոն: Ուսումնասիրելով դրանք՝ Բ. Գասպարյանը, ըստ հումքի տեսակի ու գործիքների տիպային առանձնահատկությունների, ամբողջ հավաքածուն բաժանել է չորս ժամանակագրական խմբերի (I - Աշեյյան, II - մուստերյան, III - էտմուստերյան (էտպալեոլիթյան և էպիպալեոլիթյան), IV - բրոնզե-երկաթեդարյան):

⁶ К. А. М к р т ч я н. О Памбакском комплексе ископаемых млекопитающих в Армении.— Наука о земле, 1958, № 4.

⁷ Т. А. А й р а п е т я н. Новые данные о фауне плейстоцена Армении.— Доклады Академии наук АрмССР, LXII, 1976, № 5, с. 102, 103; К. А. Г р и ч у к, Т. А. А й р а п е т я н. Разрез плейстоценовых континентальных отложений Гамзачиманской котловины.— Наука о земле, 1976, № 6, с. 68-70; К о ж е в н и к о в и др., Очерк стратиграфии Антропогена Кавказа. Л., 1977, с. 56-57.

⁸ Б. З. Г а с п а р я н и др., Каменный век Таширского плато. — Հին Հայաստանի մշակույթ, XIII, Երևան, 2005, էջ 17-27:

Ուշագրավ գտածոներից են Աշեյան ձեռքի հատիչը – սպիտակ կայծքարից, մուստերյան սրածայրերը՝ բազալտից, «նոսայ» տիպի կտրիչները՝ օբսիդիանից և միակ ոսկրե առարկան խազագծերի հետքերով: Միաժամանակ հեղինակը նշում է, որ Տաշիրի սարահարթում դեռևս չի հայտնաբերվել վերին պալեոլիթյան ժամանակաշրջանին բնորոշ գտածոներ:

1999–2000 թթ. բրիտանա-իսպանական մասնագետների խումբը պլեստոցեն շրջանի մարդու հետքերը հայտնաբերելու նպատակով հետազոտել է Տաշիր սարահարթի Մեծավան գյուղի ծայր հյուսիսը, որն ամենամոտն է (34 կմ) Դմանիսի հնավայրին⁹: Հայտնագործություններ չեն եղել բացի մի քանի կվարցե իրերից, որոնք գտնվել են Շահնագարի շրջակայքում: Գտնելով, որ Հայաստանի հյուսիսն անչափ հեռանկարային է «Հայկական միջանցքի» բացման առումով, այնուամենայնիվ նախընտրեցին Փոքր Կովկասի ծայր հարավում գտնվող Ազոխի հանրահայտ քարայրի վերապեղումների իրականացումը:

2000–2001 թթ. հայ-ֆրանսիական արշավախումբը ևս հետազոտել է Ախուրյանի վերին հոսանքի (Աշոցք) մի շարք հումքի աղբյուրներ (Կամկուտ–կայծքար, Մեծ ու փոքր Սեպասար – բազալտ, դացիտ, Ենիյոլ – օբսիդիան) և շատ մեծ տարածքից հավաքվել է վերգետնյա գտածոների մի հավաքածո, որը ընդհանուր առմամբ, բնութագրվում է հումքի բազմազանությամբ, քարե իրերի մեծությամբ (10–20 սմ) ու ծանրությամբ (մինչև 2 կգ և ավելի) և, որ կարևորն է, գործիքների բացարձակ չձևավորվածությամբ: Այդ սակավաթիվ գտածոները, չնայած արխաիկ տեսքի, բավականին թարմ հանույթի հետքեր ունեն, քան այն կայանների նյութերը, որոնք տալիս են ավելի մանր (կայծքարի, օբսիդիանի, հասպիսի) իրեր՝ հողմնահարման հետքերով: Վերջիններս ուղեկցվում են խեցեղենի ու երբեմն էլ ոսկորների բեկորներով¹⁰:

Լոռու մարզի Մեծավանի շրջանի տարածքում արշավախումբը հետազոտել է մինչ այդ հայտնի հումքի աղբյուրներ և հավաքել քիչ քանակությամբ քարե գործիքներ, հար ու նման վերը հիշատակված հնավայրերի նյութերին: Բացի այդ, հայտնաբերվել են նոր երկու ժայռածածկ (Շահնագար և Գոգավան), որոնք տվել են վերգետնյա ուշ շրջանի հնագիտական աղքատիկ նյութեր, հավանաբար բրոնզեդարյան:

Դեբետի (Ալավերդու մոտ) և Չորագետի (Ստեփանավանի դիմաց) կիրճերում հետազոտվել են մի շարք քարայրներ, սակայն հնագիտական նյութեր չեն հայտնաբերվել: Միայն Չորագետի վտակներից մեկի հովտում հայտնաբերվել է մի քարայր (Միկիչանց ձոր), որի մշակութային նստվածքները լվացվել և հոսել են քարայրի հրապարակի թեք լանջով ցած: Վերջինիս մակերեսից հավաքվել են որոշակի նյութեր (սկավառակաձև միջուկ, տերևաձև նետասլաք և մանր քարե իրեր՝ տարբեր հումքից): Այս բոլորն ուղեկցվել են բրոնզեդարյան խեցեղենով ու հոլոցենյան ֆաունայի (ձի, ոչխար, եղջերու) ոսկրային մնացորդներով:

Ընդհանրացնելով հետախուզական աշխատանքների արդյունքները՝ Բ. Ֆորլուբեն հանգել է հետևյալ եզրակացություններին.

⁹ Г. Н и о р а д з е. Галечные орудия из палеолитической стоянки в Дманиси.– Археология, этнология и фольклористика; материалы международной конференции, Эчмиадзин, 2003, с. 38.

¹⁰ Ա. Ք ա լ ա ն թ ա ր յ ա ն, Հ. Մ ե լ ք ո ն յ ա ն. Հնագիտական աշխատանքները Հայաստանում 1999-2003 թթ., Երևան, 205, էջ 32:

ա) Հյուսիսային Հայաստանի տարածքում պալեոլիթյան մշակույթ չի հայտնաբերվել: Հավանական պատճառները կարող են լինել՝ տարածքի քիչ ուսումնասիրվածությունը, հին մշակույթների հրաբխային լավաների տակ ծածկվելը:

բ) Մինչ այսօր հայտնաբերված արխաիկ վերգետնյա գտածոների մեջ չկան անգամ մուստերյան գործիքների ձևեր: Եղածն էլ, ավելի շուտ, ստորին պալեոլիթի գործիքների իմիտացիաներ են, արված՝ նախապատմական, գուցե և պատմական շրջաններում:

գ) Քարայրատիպ ժայռածածկերի խախտված շերտերից ստացված նյութերը լրիվ համապատասխանում են բրոնզեդարյան մշակույթին¹¹:


2005 թ. Ստեփանավան քաղաքի հյուսիս-արևմտյան արվարձանից (Կիրպիչնի) ուսուցչուհի Լ. Մխիթարյանը հայտնաբերել է տիպիկ աշելյան սրտաձև ձեռքի հատիչ պատրաստված սև բազալտից՝ մոխրագույն պատինայով: Հատիչը լավ մշակված է երկկողմ բեկորմամբ և ունի թեթևակի վնասվածքներ կողերի ու հիմքի շրջանում¹² (նկ. 3):

2003–2008 թթ. հայ-ռուսական արշավախումբը Լոռու մարզում հետապնդել է նույն նպատակը, ինչ նախորդ արտասահմանյան արշավախմբերը, այսինքն՝ ստորին պալեոլիթի հնավայրերի հայտնաբերումը: Այս խնդիրը լուծելու համար լայնացվել է հետախուզական աշխատանքների շրջանակը՝ ընդգրկելով Լոռու գոգավորությունն ամբողջովին: Արդյունքում հայտնաբերվել են բազմաթիվ հնավայրեր, որոնք տվել են ստորին պալեոլիթից մինչև երկաթե դարի ժամանակաշրջանն ընդգրկող հնագիտական նյութեր: Վերգետնյա նյութ է հավաքվել քարե դարի բացօթյա 25 կայաններից, պեղվել են Անդրկովկասում առաջին անգամ հանդիպող շերտագրված աշելյան և մինչ աշելյան կայաններ ու ճամբարներ և մի քարայր մուստերյան-մեզոլիթյան մշակույթի մնացորդներով¹³: Նշենք դրանցից մի քանիսը.


¹¹ C h. F o u r l o u b e y. Missin Caucase. Rapport sceamitifque sur les operations en 2000. Lyon, 2000, p. 11–18.

¹² Գտածոն մեր կողմից ուսումնասիրվելուց հետո հանձնվել է Ստեփանավանի Մշակույթի տան թանգարանին:


¹³ S. A. A s l a n i a n, E. V. B e l y a e v a, E. M. K o l p a k o v, V. P. L u y b i n, G. M. S a r k i s i a n, and A. V. S u v o r o v. 2007a, Work of the Armenian-Russian Archaeological Expedition in 2003–2006. Transactions of the Institute for the History of Material Culture 2: p. 142–154. S. A. A s l a n i a n, E. V. B e l y a e v a, E. M. K o l p a k o v, V. P. L u y b i n, G. M. S a r k i s i a n and A. V. S u v o r o v, 2007b, Armenian-Russian Archaeological Expedition. Archaeological Discoveries, 2005, p. 532–534.



Նկ. 1. Գիլիկի մուստերյան գործիքների հավաքածուն (կայծքար)



Նկ. 2. Հացուտի Վերին պալեոլիթի հավաքածուն (կայծքար)



Նկ. 3. Աշելյան ձեռքի հատիչ Ստեփանավանից (բազալտ)

1. Դաշտադեմ – 3-ը գտնվում է Ստեփանավանից 25 կմ հարավ՝ Դաշտադեմ գյուղից 6 կմ հեռու մի ոչ մեծ բարձունքի գագաթին, ծովի մակերևույթից 1902 մ բարձրության վրա: 2004–2006 թթ. պեղվել է 30 մ² տարածք՝ մինչև 1 մ խորությամբ: Նստվածքները ներկայացված են միասեռ մոխրագույն ավազակավերով ու ռիոլիտ-դաջիտե խոշոր բլոկներով: Հայտնաբերված արտեֆակտները բացառապես քարից են (2500 իր), այլ հնագիտական նյութեր ու օրգանական մնացորդներ չեն հանդիպում: Քարե գործիքների մեծ մասը դաջիտից են (2460 իր), և ներկայացնում են միջուկներ, սրածայրեր, քերիչներ, էլեմենտար մշակված ու չմշակված շեղբեր և ուշ աշելյան ձևավորման տարբեր մակարդակում գտնվող 49 ձեռքի հատիչ: Օբսիդիանե հավաքածուն ներկայացված է ցլեպների ու շեղբերի կտորներից պատրաստված մանր գործիքներով, որոնք տիպաբանական առումով անչափ համը են: Կան նաև այլ քարատեսակներից եզակի իրեր: Ամբողջ համալիրը Ե. Կոլպակովը վերագրել է աշելյան էպոխայի վերջին փուլին և հուշարձանը որակել է որպես աշելյան շրջանի մարդու որսորդական ճամբար¹⁴ (նկ. 4):

2. Մուրադովոյի հնավայրը նույնպես բաց տարածքում պեղված բազմաշերտ հուշարձան է: Ուսումնասիրություններն այստեղ նոր են սկսվել և շատ հարցեր դեռևս պարզ չեն: Ինչպես նշում են ուսումնասիրողները (Վ. Լյուբին, Ե. Բեյլանա), գտածոները մեծամասամբ աշելյան են և հայտնաբերվել են հինգ շերտից. 1–2 շերտերը վերին աշելյան են և լևալլուայան, 3 շերտն ավելի զարգացած աշել է (կոպիտ մշակված բիֆասներով, չոպպերներով և պիկերով) ու ոչ լևալլուայան տեխնիկայի կիրառմամբ: 4–5 շերտերի գործիքներն այլ հումքից են և ներկայացնում են աշելի ոչ հատիչային տարբերակ: Բացի 5-րդ շերտից գտնված երկու քերիչներից ու չոպպերներից՝ գործիքները տիպաբանորեն որոշված չեն: Հեղինակները հակված են կարծելու, որ այն մինչ աշելյան կարող է լինել¹⁵:


3. Կուրթանի հնավայրը գտնվում է Լոռու գոգավորության հարավարևմտյան մասում, համանուն գյուղի մերձակա տարածքում: Այն իրենից ներկայացնում է ավազակավի հանքի 10 մ ուղղաձիգ կտրվածք (կարիեր): Վերջինիս տակի փլվածքից հայտնաբերվել են ռիոլիտե և կայծքարե գործիքներ (քերիչներ, միջուկներ): Մի շարք հորատումներից պարզվել է 5 մ նստվածքների (ավազակավեր, հրաբխային մոխիրներ, թաղված հողեր) յոթ շերտազրական մակարդակներ, որոնցից միայն երկուսում են հանդիպում քարե գործիքներ: Հենց այս հուշարձանն էլ համարվում է ստորին պալեոլիթի վաղագույն մշակույթի հայտնաբերման համար ամենահեռանկարայինը¹⁶:

2009–2010 թթ. ընթացքում Դեբեդի ստորին հոսանքում հնագիտական հետախուզական բնույթի աշխատանքներ են իրականացվել նաև հայամերիկյան արշավախմբի կողմից: Նշված աշխատանքների արդյունքում

¹⁴ E. M. K o l p a k o v. The Late Achulian Site of the Dashtadem – 3 in Armenian Paleoanthropology. 2009, p. 3–31.

¹⁵ Նույն տեղում:

¹⁶ В. П. Л ю б и н. Новый этап в изучении ранней предыстории Кавказа.– Труды II Всероссийского археологического съезда, т. I. М., 2008, с. 141–143.



ա



բ



դ



գ

Նկ. 4. Դաշտադեմ – 3 (ա. քարտեզ, բ. տեղանքը, գ. կտրվածքը և դ. ուշ աշեյան քարե գործիքների համալիրը)

ՀՀ Տավուշի մարզի Ղերեղավան, Բագրատաշեն, Պտղավան, Հաղթանակ, Այրում, Լճկաձոր գյուղերին հարող տարածքների գետային դարավանդների մակերևույթից հավաքվել են զանազան գլաքարային հումքից (դացիտ, կվարցիտ, կրաքար, ֆելզիտային տուֆ, կայծքար) պատրաստված առարկաներ, որոնք տիպաբանական առումով բնորոշ են գլաքարային մշակույթին (ներկայացված են չոպերների, չոպինգների, պիկանման իրերի դասական օրինակներով), ինչպես նաև միջին պալեոլիթի մուստերյան մշակույթի լնալուայան փուլին (ներկայացված են լնալուայան տիպի միջուկներով, ցլեպներով և դրանց հենքի վրա պատրաստված սրածայրերի ու քերիչների օրինակներով): 2010 թ. Բագրատաշեն-1 և Պտղավան-5 կայաններում կատարված հետախուզական պեղումները ցույց են տալիս անխաթար իրավիճակում գտնվող մշակութային շերտերի հայտնաբերման մեծ հավանականություն:

Ասփոփելով հին ու նոր ուսումնասիրությունների արդյունքները, կարելի է եզրակացնել.

1. Հյուսիսային Հայաստանում դեռևս չի հայտնաբերվել քարե դարի սկիզբն ավետող Երևան-1 քարայր-կացարանի¹⁷ տիպի վանակատից (օբսիդիան) պատրաստված արդյունաբերական բնույթի, ավանդական պալեոլիթյան մշակույթ:

2. Հյուսիսային Հայաստանում բացակայում է նաև նոր քարե դարի՝ նեոլիթյան դարաշրջանի մշակույթը, որը մեզ հայտնի է Արարատյան հովտի վաղ երկրագործական արտադրական բնույթի հնագիտական մշակույթից (Մասիս բլուր, Խաթունարիս, Թեղուտ)՝ կազմված բացառապես վանակատե գործիքներից ու ոսկրե իրերի համալիրներից: Այստեղ մենք այսօր ունենք մի քանի բացօթյա կայաններ (Մեծավան-3, Հացուտ, Ֆիոլետովո), որոնց քարե գործիքների համալիրները կարող են դիտվել որպես ուշ նեոլիթի վերապրուկային դրսևորումներ:

3. Մետաղի դարաշրջանի (բրոնզ-երկաթ) հնագիտական մշակույթը ներկայացված է կայաններում վերգետնյա նյութերով, իսկ ժայռածածկերում՝ բրոնզի դարի մշակույթի խաթարված մնացուկներով:

4. Ինչ վերաբերում է աշելյան ու գլաքարային մշակույթներին բնորոշ քարե գործիքների առանձին գտածոներին ու համալիրներին, ապա, մեր խորին համոզմամբ, այն ավելի շուտ ազգագրական մշակույթ է, քան հնագիտական: Վերջինս կարող է վերագրվել քարի դարին այնքանով միայն, որ պատրաստված է քարից: Բայց լինելով ոչ արտադրական բնույթի համալիրներ, պալեոլիթյան քարե գործիքների ոչ վաղ անցյալում վերարտադրության արդյունք են, սակայն այլ նպատակների համար: Հետևաբար աշելյան հուշարձան, ճամբար, արդյունաբերություն, մշակույթ հասկացություններով նման համալիրների բնորոշումը, կարծում եմ, առնվազն անախորհիզմ է¹⁸:

¹⁷ Այս մասին մանրամասն տե՛ս Բ. Երիցյան. Երևանская пещерная стоянка и ее место среди мустерских стоянок Кавказа, автореф. канд. дисс. М., 1971.

¹⁸ Բ. Երիցյան, Ս. Թադևոսյան. Մուշավան-1 կայանը և նրա Օլդովայան մշակույթը. - Հին Հայաստանի մշակույթը XIII, էջ 5-16:

СОВРЕМЕННОЕ СОСТОЯНИЕ ИЗУЧЕНИЯ КУЛЬТУРЫ КАМЕННОГО ВЕКА НА
ТЕРРИТОРИИ СЕВЕРНОЙ АРМЕНИИ

БЕНИК ЕРИЦЯН

Р е з ю м е

Изучение памятников каменного века, а также палеонтологических находок плейстоцена и голоцена на территории Северной Армении показывает, что в Северной Армении пока не удалось зафиксировать традиционной, базирующейся исключительно на обсидиановом сырье, индустриальной палеолитической культуры наподобие пещеры Ереван-1, которая бы знаменовала начало каменного века. Здесь пока отсутствует также культура неолитического периода, хорошо известная археологическими культурами производственного назначения из раннеземледельческих памятников Араратской долины (Масис блур, Хатунарх, Техут). Что касается отдельных находок и комплексов каменных изделий, характерных для галечной и ашельской культур, то они, скорее всего, представляют этнографическую, чем археологическую культуру. Представленные комплексами непроизводственного назначения, последние являются следствием воспроизведения палеолитических изделий в недавнем прошлом и употреблены для иных целей.

MODERN STATE OF STUDY OF STONE AGE CULTURE IN THE TERRITORY OF NORTHERN
ARMENIA

BENIK YERITSYAN

S u m m a r y

The study of Stone Age sites and paleontological finds of Pleistocene and Holocene in the territory of Northern Armenia shows that up to now the area of Northern Armenia has missed traditional, exclusively based on obsidian raw material industrial Paleolithic culture like the Yerevan-1 cave site, which could declare the start of the Stone Age. Sites of the Neolithic period, represented with archaeological cultures of productive character and well known from the early agricultural sites of the Ararat Plateau (such as Masis Blur, Khatunarkh and Teghut) are absent as well. Concerning the separate finds and whole complexes of the Pebble and the Acheulian cultures, those, more probably are representing ethnographic cultures than archaeological ones. Distributed by complexes of non-industrial character, those are reproductions of the Paleolithic artifacts in the recent past, with another purposes of usage.